ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հաստատում եմ

Տնօրեն Ժ/Պ Ս. Ավանեսյան

«_____» _____2024թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԶԻՆՂԵԿԻ)

Տնօրենի տեղակալ_____ *Ավանեսյան Սերգեյ*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

ՏՎՅԱԼՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Մակերեսը (քմ)	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, սարքավորումներ, նյութեր	Ուսումնադիդակտիկ նյութերը
Նախնական զինվորական պատրաստության	54	ոչ	Աշակերտական սեղան 15 աթոռ- 30 Գրատախտակ -1 Ուսուցչի սեղան-1 Ուսուցչի աթոռ-1 Կախիչ-1	Պաստառներ 8

Դասենյակի համար	Դասասենյակ	Սովորող աշակերտների թիվը
601	7 «Ա»	24

Կաբինետը ծառայում է նաև որպես դասասենյակ: Կաբինետում առկա գույքը, աշակերտական սեղան-աթոռների դասավորությունը հարմարեցված է ըստ պահանջի: Աշակերտական աթոռները նախատեսված են մեկ աշակերտի համար: Շարքերով դասավորված աթոռները հարմար են անհատական և կոլեկտիվ աշխատանքի համար: Փոխներգործուն մեթոդներով աշխատելիս ուսուցիչն կարող է առանց դժվարության փոխել դասավորությունը և ստանալ իր դասի մտահաղացմանը հարմար աշխատատեղեր:

Կաբինետում կա 3 լուսամուտ: Դասասենյակի բնական լույսն ընկնում է ձախ կողմից: Յուրաքանչյուր դասաժամից հետո դասասենյակը օդափոխվում է: Երկտողանի սեղան-աթոռները շարված են իրար հետևից: Սեղան–նստարանների միջև ընդհանուր առմամբ 20-30սմ տարածություն կա: Առաջին սեղան-նստարանից մինչև գրատախտակը հեռավորությունը 2,0-2,4 / 2,4-2,7/մ է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ցանկացած պետության պաշտպանությունը տվյալ պետության և ժողովրդի կարևորագույն խնդիրն ու պարտականությունն է: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Պետությունը այդ խնդիրն իրականացնում է զինված ուժերի միջոցով:

Հզոր և մարտունակ բանակ ունենալու համար անհրաժեշտ է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և տեխնիկա այլ նաև բանիմաց, խիզախ, հայրենասիրական ոգով օժտված զինվորներ և սպաներ: Չթերագնահատելով հասարանության և ընտանիքի դերը ապագա զինվորի կրթման և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, պետք է նշել, որ այդ ամենի ամբողջ պատասխանատվությունը դրված է հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: Դպրոցն է այն դարբնոցը որտեղ կրթվում և դաստիարակվում է մեր վաղվա զինվորն ու սպան:

ՀՀ ԶՈՒ խնդիրների, առանձնահատկությունների և նշանակության, հայոց բանակի պատմական ավանդույթների, այսօրվա զենքի ու ռազմական տեխնիկայի, կանոնադրությունների և արարողակարգերի մասին վաղվա զինվորներն ու սպաները տեղեկանում են են հենց աշակերտական նստարանից, և հենց առաջին տպավորությունն էլ վճռորոշ է լինում նրանց որպես անհատ և քաղաքացի ձևավորման և մասնագիտական կողմնորոշման գործում:

Հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս ստանալ նախնական ռազմական գիտելիքներ և դրանք լավագունս կիրառել զինվորական ծառայության ժամանակ: ՆԶՊ առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստելով ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն:

Յուրաքանչյուր պատանի պետք է իրեն նախօրոք պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար, և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ծանոթ լինի զինվորական ծառայության առանձնահատկություներին, ունենա ռազմագիտական նվազագույն անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը հանրակրթական ուսումնական հաստատություններում համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստում է զինվորական ծառայության, սովորողներին զինում անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով, ապահովում անվտանգ կենսագործունեության հիմունքների յուրացումը ինչպես նաև նպաստում է ազգային բանակում ծառայելու և հայոց բանակի պատմական ավանդույթները շարունակելու սեփական պարտքը գիտակցող, կարգապահ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և աշխատանքային գործունեությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության պլանավորման և աշխատանքների կազմակերպման գործում մեծ դեր ունեն ուսումնական հաստատության զինվորական զեկավարները:

Բացի դրանից զինղեկը իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ, ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում:

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է դաստիարակչական աշխատանքի մյուս բոլոր ուղղությունների հետ միասին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

№	Աշխատանքի բովանդակությունը	Անցկացման ժամանակը	Ենթադրվող արդյունքը
1	Աշխատանքների պլանավորում նախորդ ուսումնական տարվա արդյունքների վերլուծության հիման վրա	Օգոստոս-սեպտեմբեր	Համակարգված աշխատանք
2	Կաբինետի կահավորում: Գույքի համալրում անհրաժեշտ պարագաներով:	Տարվա ընթացքում	Լրացուցիչ տեղեկատվության աղբյուր
3	Ծաղկադրում Գորիսի զինվորական պանթեոնում	Սեպտեմբեր 27	Հայրենասիրության սերմանում և հավատք սեփական երկրի նկատմամբ, ճանաչողական այց
4	Տեղեկատվական դաս նվիրված 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի շրջանավարտներին	Սեպտեմբերի 27	Ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդում
5	Առկա զենքի, գույքի, պաստառների սանիտարական վիճակի ստուգում	Դեկտեմբեր	Լրացուցիչ տեղեկատվության աղբյուր
6	Դաս-միջոցառում Հայոց բանակի կազմավորման օրվան նվիրված	Հունվար	Հայրենասիրական, ճանաչողական միջոցառում
7	Սպատապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը հարգանքի տուրք Եռաբլուրում	Մարտի 5	Հայրենիքի արժևորում, հայրենասիրության սերմանում
8	Ծաղկադրում Եղեռնի զոհերի հուշակոթողում	Ապրլի 24	Արժևորել հայրենասիրությունը և բարձր պահել հայորդու ոգին
9	Ներկայացնել կատարած աշխատանքների մասին հաշվետվություն	Մայիս	Աշակերտների մոտիվացում
10	Զինվորական համզգեստի ձեռքբերում և այն կրում աշխատանքի ընթացքում	Տարվա ընթացքում	Ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդում
11	Զինկոմիսարիատների աջակցություն՝ պատանիներին զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստվելու համար	Տարվա ընթացքում	Կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը
12	Համագործակցություն ուսումնական հաստատության մյուս մանկավարժների, հոգեբանի և ծնողների հետ	Տարվա ընթացքում	Սովորողների կրթության և դաստիարակության կազմակերպում
13	Համագործակցություն գործընկերների հետ՝ փորձի փոխանակման նպատակով	Տարվա ընթացքում	Մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացում

14	Սովորողներին մասնակից դարձնել հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի և քաղպաշտպանության համայնքային, մարզային, համայնքային մրցումներին	Տարվա ընթացքում	Սովորողներին ներգրավվել ուումնական գործընթացներին, արժևորելով և գնահատելով նրանց դերը
15	Ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակություն	Տարվա ընթացքում	Ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդում
16	Հաշվառել և պահպանել ուսումնական զենքը, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջի	Տարվա ընթացքում	Կարգապահական կանոնների պահպանում, համակարգված աշխատանք
17	Մասնակցել մանկավարժական խորհրդի նիստերին	Տարվա ընթացքում	Կարգապահական կանոնների պահպանում, գործընկերների հետ սերտ համագործակցություն
18	Ըստ սահմանված պլանի ուսումնական տարվա ընթացքում տարհանման վարժանքների իրականացում	Սեպտեմբեր-մայիս	Սահմանված ժամանակահատվածում դպրոցի կոլեկտիվի անդամների և աշակերտների տարհանում
19	Նախազորակոչային և զորակոչային տարիքի աշակերտների ցուցակագրում և ներկայացում զինկոմիսարիատ	Տարվա ընթացքում	Աջակցություն աշակերտներին բժշկական ստուգումների ընթացքում
20	«Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցիչների հետ բազմամարտի և քաղպաշտպանության նորմատիվների ցուցանիշների հանձնման կազմակերպում	Տարվա ընթաքում	Աշակերտների կարողությունների գնահատում, համագործակցությամբ աշխատելու հմտությունների զարգացում
21	«Հայոց լեզու և գրականություն» առարկայի ուսուցչի հետ համագործակցությամբ միջոցառում «Ապրելու ապրիլ» խորագրով	Ապրիլ	Հայրենասիրական դաստիարակության սերմանում, հայրենիք-դպրոց- բանակ կապի ամրապնդում
22	ՄԿԱ Գծով փոխտնօրենի հետ համագործակցությամբ հայրենասիրական միջոցառում	Մայիս	Ազգային արժեքների նկատմամբ դրական վերաբերմունքի, հայրենասիրության ձևավորում
25	Կրակային ցուցադրական դաս-միջոցառում	Մայիս	Գործնականում կիրառել տեսական գիտելիքները, ստեղծել անաչառ պայքար աշակերտների մեջ